

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N
737-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2023 թվականի _____ N__-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ
28-Ի N 737-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև փոխադարձ առևտրի վիճակագրության վարման կանոններն ու փոխադրվող ապրանքների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման վիճակագրական ձևը և դրա լրացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի N 447-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 737-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝
 - Որոշման վերնագրում «ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ» բառերից հետո լրացնել «, ԿԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ» բառերը, իսկ «ՀԱՍՏԱՏԵԼՈՒ» բառը փոխարինել «ՍԱՀՄԱՆԵԼՈՒ» բառով.
 - Որոշման նախաբանում «Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասին» բառերը փոխարինել «օրենքի 225-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերին» բառերով.
 - Որոշման 1-ին կետում «հաստատել» բառը փոխարինել «սահմանել» բառով.
 - Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում «վարման կանոնները» բառերից հետո լրացնել «, վիճակագրական տեղեկատվության ներկայացման կարգն ու ժամկետները» բառերը.
 - Որոշման 2-րդ կետում «վերադաս մաքսային մարմնի» բառերը

փոխարինել «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի» բառերով.

- Որոշման N 1 հավելվածի`

ա. վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՌԵՎՏՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ, ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ».

բ. 5-րդ կետում «ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով» բառերը փոխարինել «օրենքի 224-րդ հոդվածի 2-րդ մասով» բառերով, իսկ «վիճակագրական հաշվետվություն» բառերից հետո լրացնել «, որում ամփոփվում է «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 225-րդ հոդվածով նախատեսված` մաքսային մարմիններին ներկայացվող վիճակագրական տեղեկատվությունը» բառերը.

գ. 6-րդ կետում «ՀՀ իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձը» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձը, անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձը կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախատեսված` ակնհայտ առևտրային չափաքանակներով ապրանքների տեղափոխում իրականացնող ֆիզիկական անձը» բառերով.

դ. 8-րդ կետում «հունիսի 28-ի» բառերից առաջ լրացնել «2018 թվականի» բառերը.

ե. 14-րդ կետում «Վերադաս մաքսային մարմինը» բառերը փոխարինել «Պետական եկամուտների կոմիտեն» բառերով, իսկ «ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանն» բառերը փոխարինել «ՀՀ վիճակագրական կոմիտեին» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ